

ԳԼԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

## ՔԻՄԻԱ

2016 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԵՎ  
ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

# ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ 2015

## Պատասխանատու՝ Գյուլնարա Փալիկյան

Գնահատման և թեստավորման կենտրոնը շնորհակալություն է հայտնում ՀՀ բուհերի ամբիոններին, ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտին, ուսուցիչներին և բոլոր շահագրգիռ անձանց գործող ուղեցույցի վերաբերյալ հայտնած կարծիքների, ներկայացրած առաջարկությունների և դիտողությունների համար, որոնք հաշվի են առնվել ուղեցույցի սույն տարբերակում:

©Գնահատման և թեստավորման կենտրոն, 2015 թ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ .....	4
ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ.....	5
ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՂԹԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ.....	5
ԹԵՍՏԵՐՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ՇՏԵՄԱՐԱՆԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	10
ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՆՅՈՒԹԸ.....	11
ՑՈՒՑՈՒՄՆԵՐ.....	11
ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՂԹԻ ՆՄՈՒՇԸ.....	12

## ՆԱԽԱԲԱՆ

Ուղեցույցում ներկայացված են 2016թ. «Քիմիա» առարկայի պետական ավարտական և միասնական քննությունների թեստերի նոր կառուցվածքը, տարբեր կառուցվածք ունեցող առաջադրանքների նմուշ օրինակներ, պատասխանների ձևաթուղթը և դրա լրացման կարգի բացատրությունը, առաջադրանքներում ընդգրկվելիք ծրագրային նյութի շրջանակները:

***Պետական ավարտական և միասնական քննությունների քննական թեստերի առաջադրանքները ընտրվում են շտեմարաններից: Ի տարբերություն նախորդ տարիների՝ 2016 թվականին շտեմարանային առաջադրանքները քննական թեստերում կարող են ներառվել մասնակի փոփոխություններով՝ պահպանելով առաջադրանքի տեսակը և կառուցվածքը:***

2016 թ. պետական ավարտական և միասնական քննության համար որպես հիմք են ընդունվել հանրակրթական հիմնական դպրոցում գործածության համար երաշխավորված քիմիայի ծրագրերը և դասագրքերը, ավագ դպրոցի քիմիայի ընդհանուր հոսքի ծրագրերն ու երաշխավորված դասագրքերը, ինչպես նաև 2014, 2015 թվականներին հրատարակված «Քիմիա» առարկայի պետական ավարտական և միասնական քննությունների շտեմարանները՝ համապատասխան փոփոխություններով:

## 1. ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

«Քիմիա» առարկայի պետական ավարտական և միասնական քննական թեստը բաղկացած է երկու՝ Ա և Բ մակարդակներից և ներառում է 57 առաջադրանք (80 միավոր): Ա մակարդակը նախատեսված է ավագ դպրոցի «Քիմիա» առարկայի ավարտական քննության համար: Բ մակարդակն Ա մակարդակի հետ միասին նախատեսված է միասնական քննությունների համար:

Թեստում առաջադրանքները երեք կառուցվածքային տիպի են՝ ընտրովի պատասխանով, կարճ պատասխանով և պնդումների փունջ:

Թեստի Ա մակարդակը պարունակում է 45 առաջադրանք, որոնցից 40-ը ընտրովի պատասխանով են, 4-ը՝ կարճ պատասխանով, իսկ 1-ը վեց պնդումից կազմված պնդումների փունջ է: Ա մակարդակում ընդգրկվում են քիմիայի առարկայական ծրագրի գրեթե բոլոր թեմաները: Ա մակարդակը գնահատվում է առավելագույնը 50 միավոր:

Բ մակարդակը պարունակում է կարճ պատասխան պահանջող 24 ենթաառաջադրանքից կազմված 11 առաջադրանք, որոնցից **մեկը կարճ պատասխանով համապատասխանեցնելու առաջադրանք**, մեկը՝ մեկ հարցանի առաջադրանք, 5-ը՝ երկուական ենթաառաջադրանքից կազմված առաջադրանքներ են, 4-ը՝ երեքական ենթաառաջադրանքից կազմված առաջադրանքներ, որոնց կատարման համար տրվում է առավելագույնը 24 միավոր, և 1 պնդումների փունջ, որի կատարման համար տրվում է առավելագույնը 6 միավոր: Բ մակարդակում ընդգրկված են քիմիայի առարկայական ծրագրի բոլոր թեմաները: Բ մակարդակը գնահատվում է առավելագույնը 30 միավոր:

Պետական ավարտական և միասնական քննական թեստի՝ Ա և Բ մակարդակների առաջադրանքների կատարման համար տրամադրվում է 180 րոպե:

Բուհ ընդունվելու համար միասնական քննության միավորը հաշվարկվում է 20 միավորանոց սանդղակով՝ հիմնվելով ամբողջ աշխատանքի (Ա և Բ մակարդակների) կատարման արդյունքում դիմորդի հավաքած միավորների վրա:

Դպրոցի շրջանավարտի ավարտական գնահատականը որոշվում է 20 միավորանոց սանդղակով:

**2. ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՂԹԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ**


**I. Ընտրովի պատասխանով առաջադրանքներ**

**Ա. Պարզ առաջադրանքներ**

*Այսօրինակ առաջադրանքների համար տրվում է պատասխանի շորս տարբերակ, որոնցից միայն մեկն է ճիշտ:*

**Նմուշ 1.** Ածխածնի առաջացրած  $n^{\circ}$  պարզ նյութի բյուրեղավանդակն է պատկերված, և ի՞նչ հիբրիդային վիճակում են գտնվում ածխածնի ատոմներն այդ նյութում:

- 1) ալմաստ,  $sp^3$
- 2) գրաֆիտ,  $sp$
- 3) ֆուլերեն,  $sp$
- 4) գրաֆիտ,  $sp^2$



**Բ. Համապատասխանեցում:**

*Այսօրինակ առաջադրանքների համար տրվում են երկու կամ երեք շարքեր և այդ շարքերի միավորների համապատասխանեցումով կազմված պատասխանների տարբերակներ: Տրված շարքերից պետք է ընտրել պատասխանների այն տարբերակը, որում միավորների համապատասխանեցումը ճիշտ է:*

Նմուշ 2 . Համապատասխանեցրե՛ք դարձելի ռեակցիայի ջերմա-քիմիական հավասարումը հավասարակշռության տեղաշարժի ուղղության հետ՝ ճնշումը և ջերմաստիճանը միաժամանակ բարձրացնելիս.

Ռեակցիայի հավասարում	Ճնշման բարձրացում	Ջերմաստիճանի բարձրացում
ա) $2\text{SO}_{2(g)} + \text{O}_{2(g)} \rightleftharpoons 2\text{SO}_{3(g)} + Q$	1) դեպի աջ	Ա) դեպի ձախ
բ) $2\text{CO}_{(g)} \rightleftharpoons \text{C}_{(u)} + \text{CO}_{2(g)} - Q$	2) դեպի ձախ	Բ) չի տեղաշարժվի
գ) $2\text{Fe}_{(u)} + \text{O}_{2(g)} \rightleftharpoons 2\text{FeO}_{(u)} + Q$	3) չի տեղաշարժվի	Գ) դեպի աջ
դ) $\text{I}_{2(g)} + \text{H}_{2(g)} \rightleftharpoons 2\text{HI}_{(g)} + Q$		

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա1Ա, բ1Գ, գ1Ա, դ1Ա
- 2) ա1Ա, բ1Գ, գ1Ա, դ3Ա
- 3) ա3Ա, բ3Գ, գ2Ա, դ1Ա
- 4) ա1Գ, բ3Ա, գ1Գ, դ3Գ

**Գ. Համարների շարքի ընտրություն:**

*Այսօրինակ առաջադրանքների համար տրված շարքերից պետք է ընտրել պահանջին համապատասխանող համարների (տառերի կամ թվերի) շարքը:*

Նմուշ 3. Հետևյալ մասնիկներից որո՞նք կարող են ցուցաբերել վերականգնիչ հատկություն.

ա)  $\text{Cl}^\ominus$ , բ)  $\text{Cl}^\ominus$ , գ)  $\text{Na}^\ominus$ , դ)  $\text{Na}^\oplus$ , ե)  $\text{S}^{+2}$ , զ)  $\text{S}^{+6}$ :

- 1) բ, գ, զ
- 2) ա, բ, դ
- 3) ա, բ, գ, ե
- 4) բ, դ, ե, զ

**Դ. Երկհարցանի առաջադրանքներ:**

*Այսօրինակ առաջադրանքների համար տրվում է երկու հարց՝ պատասխանների ընտրությամբ: Յուրաքանչյուր հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է մեկ միավոր:*

**Նմուշ (4-5).** Անոթում նորմալ պայմաններում խառնել են մեկական մոլ մեթան և էթան:

**4. Որքա՞ն է գազային խառնուրդի զանգվածը (գ):**

- 1) 2
- 2) 16
- 3) 30
- 4) 46

**5. Որքա՞ն է գազային խառնուրդի խտությունը ըստ ջրածնի:**

- 1) 8
- 2) 11,5
- 3) 15
- 4) 23

**Գնահատման չափանիշը:** Ա մակարդակի 1-40-րդ առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր, սխալ պատասխանը՝ 0:

**Ձևաթղթի լրացման կարգը:** Պատասխանների ձևաթղթում Ա մակարդակի 1-40-րդ առաջադրանքներից յուրաքանչյուր առաջադրանքի համարի ներքևում տրված է չորս վանդակ: Տրված առաջադրանքի ճիշտ պատասխանը գտնելուց հետո անհրաժեշտ է տվյալ պատասխանի համարին համապատասխանող վանդակում դնել «X» նշանը: Օրինակ՝ ենթադրենք, 3-րդ առաջադրանքի ճիշտ պատասխանը 1-ինն է (տե՛ս նկար 1):

	...	3	...
1		X	
2			
3			
4			

Նկ.1



## II. Պնտումների փունջ

Այսօրինակ առաջադրանքներից յուրաքանչյուրում ներկայացվում է վեց պնդում որևէ թեմայի վերաբերյալ, որոնցից յուրաքանչյուրին կարելի է տալ երեք պատասխան՝ «Ճիշտ է», «Միայն է» կամ «Չգիտեմ»: Այդ առաջադրանքներից հնարավոր է վաստակել առավելագույնը 6 միավոր:

**Նմուշ. Հաստատե՛ք կամ հերքե՛ք պնդումների ճշմարտացիությունը ծծմբի (IV) օքսիդի վերօքս հատկությունների վերաբերյալ:**

- 1)  $SO_2 + 2H_2O + Cl_2 = H_2SO_4 + 2HCl$  *ռեակցիայում օքսիդացման արդյունքում ստացված նյութի գործակիցը 1 է:*
- 2)  $5SO_2 + 2KMnO_4 + 2H_2O = K_2SO_4 + 2MnSO_4 + 2H_2SO_4$  *ռեակցիայում այն վերականգնիչ է:*
- 3)  $SO_2 + 2H_2S = 3S + 2H_2O$  *ռեակցիայում ամբողջ ծծումբը ստացվում է ծծմբի (IV) օքսիդի վերականգնումից:*
- 4)  $2SO_2 + O_2 = 2SO_3$  *ռեակցիայի 80 % էլքի դեպքում  $m_{\text{գոյացած}}(SO_3) = m_{\text{փոխադրած}}(SO_2)$ :*
- 5)  $SO_2 + 2NaOH = Na_2SO_3 + 2H_2O$  *ռեակցիայում այն օքսիդիչ է:*
- 6)  $SO_2 + 2H_2S = 3S + 2H_2O$  *ռեակցիայում ծծմբի (IV) օքսիդը ցուցաբերում է օքսիդացնող հատկություն:*

**Գնահատման չափանիշը:** Յուրաքանչյուր պնդման դիմաց ճիշտ նշված «Ճիշտ է» կամ «Միայն է» պատասխանի համար տրվում է մեկական միավոր: Յուրաքանչյուր սխալ նշված «Ճիշտ է» կամ «Միայն է» պատասխանի համար փնջից դիմորդի հավաքած միավորներից հանվում է մեկ միավոր: Եթե հանվող միավորների թիվը հավասար է կամ գերազանցում է տրվող միավորների թիվը, ապա առաջադրանքի պատասխանը գնահատվում է զրո և ամբողջ թեստից վաստակած միավորներից միավոր չի հանվում: «Չգիտեմ» պատասխանի համար միավոր չի տրվում և չի հանվում:

**Ձևաթղթի լրացման կարգը:** Պատասխանների ձևաթղթում պնդումների փնջի յուրաքանչյուր պնդման համարի ներքևում տրված է երեք վանդակ: Տրված պնդման պատասխանը գտնելուց հետո անհրաժեշտ է դրան համապատասխանող վանդակում դնել «X» նշանը: Օրինակ, ենթադրենք, «Պնդումներ փունջ» առաջադրանքի համար ընտրվել են լրացվում է հետևյալ ձևով՝ 1-ինը՝ «Ճիշտ է», 2-րդը՝ «Ճիշտ է», 3-րդը «Սխալ է», 4-րդը «Ճիշտ է», 5-րդը «Սխալ է», 6-րդը «Ճիշտ է» պատասխաններ: Պետք է լրացնել հետևյալ ձևով (տե՛ս նկ. 2).

<b>70</b>	<b>1</b>	<b>2</b>	<b>3</b>	<b>4</b>	<b>5</b>	<b>6</b>
Ճիշտ է	X	X		X		X
Սխալ է			X		X	
Չգիտեմ						

Նկ.2

### III. Կարճ պատասխանով առաջադրանքներ

#### Ա. Համապատասխանեցում կարճ պատասխանով:

*Այսօրինակ առաջադրանքների համար տրվում են երկու շարքեր և այդ շարքերի միավորների համապատասխանեցումով կազմվում է պատասխանը:*

**Նմուշ 1. Համապատասխանեցրե՛ք թթվի քիմիական բանաձևը և քլոր տարրի օքսիդացման աստիճանը:**

Բանաձև	Քլորի օքսիդացման աստիճանը
Ա) HClO	1) +1
Բ) HClO <sub>2</sub>	2) +5
Գ) HClO <sub>3</sub>	3) -1
Դ) HClO <sub>4</sub>	4) +3
	5) +7
	6) 0

**Ձևաթղթի լրացման կարգը:** Այս առաջադրանքին պատասխանելիս անհրաժեշտ է գրել կարճ պատասխանը՝ նախատեսված հորիզոնական վանդակներից յուրաքանչյուրում գրելով մեկ նիշ՝ պահպանելով տառերի և թվերի ճիշտ համապատասխանությունը:

4	6	ա	բ	գ	դ
		1	4	2	5

Նկ. 3

**Բ. Մեկ, երկու և երեք ենթաառաջադրանքներից կազմված խնդիրներ:**

**Նմուշ(1-3).** Նատրիումի հիդրոկարբոնատի 17,5% զանգվածային բաժնով 672 գ լուծույթին ավելացրել են 171գ բարիումի հիդրօքսիդ պարունակող 585 գ լուծույթ: Ռեակցիաներն ավարտվելուց հետո նստվածքը առանձնացրել են լուծույթից:

- 1) Որքա՞ն է նստվածքի զանգվածը (գ):
- 2) Ի՞նչ զանգվածով (գ) լուծույթ է ստացվել:
- 3) Որքա՞ն է լուծույթում պարունակվող ալկալիի զանգվածը (գ):

**Հաշվարկներում պետք է օգտագործել հարաբերական ատոմային զանգվածների կլորացված արժեքները (բացի քլորից՝ 35,5):**

**Գնահատման չափանիշը:** Բ մակարդակի 46-47-րդ առաջադրանքներից և 48-69-րդ ենթաառաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր, սխալ պատասխանը՝ 0:

**Ձևաթղթի լրացման կարգը:** Ա մակարդակի 41-44-րդ և Բ մակարդակի 47-69-րդ առաջադրանքներին ու ենթաառաջադրանքներին պատասխանելիս անհրաժեշտ է գրել կարճ պատասխանը՝ ձևաթղթում նախատեսված հորիզոնական չորս վանդակներից յուրաքանչյուրում գրելով մեկ թվանշան: Առաջադրանքի պատասխանը կարող է լինել 0-9999-ը ամբողջ թվերից որևէ մեկը: Օրինակ, ենթադրենք, 51-րդ առաջադրանքի պատասխանը 8 է, 52 –րդինը՝ 65, 53 –րդինը՝ 216, 54–րդինը՝ 6439: (տե՛ս նկար. 4):

51	8			
52	6	5		
53	2	1	6	
54	6	4	3	9

Նկ.4

**Ձևաթղթում պատասխանների ուղղման կարգը:** Ձևաթղթում տրված է Ա և Բ մակարդակներում սխալ նշված պատասխանն ուղղելու 5 հնարավորություն, որից 2-ը՝ ընտրովի պատասխանով առաջադրանքների համար, 2-ը՝ կարճ պատասխանով առաջադրանքների համար, 1-ը՝ պնդումների փնջի համար: Եթե անհրաժեշտ է փոխել ընտրովի պատասխանով առաջադրանքի սխալ նշված պատասխանը, ապա նախատեսված դաշտի հորիզոնական վանդակում պետք է գրել առաջադրանքի համարը, իսկ նրանից ներքև համապատասխան վանդակներից մեկում դնել «X» նշանը (տե՛ս նկար. 5)

	3	2
1		
2		
3	X	
4		

Նկ.5

Կարճ պատասխանով, այդ թվում նաև «Համապատասխանեցում կարճ պատասխանով» առաջադրանքների սխալ նշված պատասխանը փոխելու դեպքում ուղղման դաշտում հորիզոնական երկու վանդակներում գրվում է առաջադրանքի համարը, որից հետո վանդակներում լրացվում է պատասխանը (համապատասխանության համար՝ պահպանելով տառերին համապատասխանաբար թվերի հաջորդականությունը): Նկար 6-ում պատկերված է կարճ պատասխանով համապատասխանության ուղղված պատասխանը, (ա-2, բ-5, գ-3, դ-5):



Նկ. 6

Պնդումների փնջի սխալ նշված պատասխանը փոխելու դեպքում ուղղման դաշտում վերևի հորիզոնական վանդակներում պետք է գրել առաջադրանքի համարը և պնդման համարը, իսկ նրանից ներքև համապատասխան վանդակում դնել «X» նշանը (տե՛ս նկար 7):

4	5	2
Ճիշտ է	<input type="checkbox"/>	
Սխալ է	<input checked="" type="checkbox"/>	
Չգիտեմ	<input type="checkbox"/>	

Նկ. 7

3. ԹԵՍԵՐՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ՇՏԵՄԱՐԱՆԱՅԻՆ  
ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ  
ՀՆԱՐԱՎՈՐ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*2016 թվականին քննական թեստերում շտեմարանային առաջադրանքները կարող են ներառվել մասնակի փոփոխություններով՝ պահպանելով առաջադրանքի տեսակը և կառուցվածքը: Մասնավորապես կարող են փոփոխվել առաջադրանքում առկա թվային տվյալները:*

Շտեմարանային առաջադրանքի և դրա փոփոխված տարբերակի նմուշօրինակ:

*Շտեմարանային առաջադրանք*

Ի՞նչ զանգվածով (գ) Բերթոլեի աղի քայքայումից ստացված թթվածինը կբավարարի 4,8 գ ծծումբն այրելու համար.

- 1) 122,5
- 2) 0,15
- 3) 12,25
- 4) 0,1

*Փոփոխված տարբերակ*

Ի՞նչ զանգվածով (գ) Բերթոլեի աղի քայքայումից ստացված թթվածինը կբավարարի 19,2 գ ծծումբն այրելու համար.

- 1) 4,9
- 2) 0,4
- 3) 49
- 4) 4

Նման փոփոխություններ հնարավոր են նաև մյուս կառուցվածքային տեսակների առաջադրանքներում:

#### 4. ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՆՅՈՒԹԸ

«Քիմիա» առարկայի պետական ավարտական և միասնական քննական թեստում առաջադրանքներն ընտրվում են համաձայն հանրակրթական դպրոցի «Քիմիա» առարկայի ուսումնական ծրագրերի: Ստորև ներկայացվում են յուրաքանչյուր բաժնից թեստում ընդգրկված առաջադրանքների տոկոսային և միավորային համամասնությունները (տե՛ս աղյուսակ 1)

*Աղյուսակ 1*

<i>Հ/Հ</i>	<i>Քիմիայի հիմնական բաժիններ</i>	<i>Մոտավոր մասնաբաժին (%)</i>	<i>Նախնական առավելագույն միավոր (մոտավոր)</i>
<i>1</i>	<i>Ընդհանուր քիմիա</i>	<i>34-35</i>	<i>27-28</i>
<i>2</i>	<i>Անօրգանական քիմիա</i>	<i>35-36</i>	<i>28-29</i>
<i>3</i>	<i>Օրգանական քիմիա</i>	<i>26 -23</i>	<i>20-18</i>
<i>5.</i>	<i>Քիմիան և կյանքը</i>	<i>5-6</i>	<i>4-5</i>
	<i>Ընդամենը</i>	<i>100</i>	<i>80</i>

#### 5. ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

**Քննական սենյակում թույլատրվում է ունենալ՝**

- քիմիական տարրերի պարբերական աղյուսակ
- աղերի լուծելիության աղյուսակ
- մետաղների լարվածության էլեկտրաքիմիական շարքը
- հաշվիչ

# 6. ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՂԹԻ ՆՄՈՒՇՆ

2016թ. միասնական քննություն  
**Պատասխանների ձևաթուղթ**  
**Քիմիա**

ազգանուն \_\_\_\_\_

անձնական համար

անուն \_\_\_\_\_

հայրանուն \_\_\_\_\_



**Զղեք ուշադիր**

- Լրացրե՛ք միայն սև գելային զրիչով:
- Ընտրովի պատասխանով առաջադրանքներում և պնդումների փնթերում Չեր ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դրե՛ք X նշանը (միևնույն պլուսակի մեկից ավելի վանդակներում զանկացած նշում կհամարվի սխալ):
- Թվերը գրե՛ք հետևյալ տեսքով՝ 1 2 3 4 5 6 7 8 9 0

1 1

Թեստ №

1  2  3  4

**Ա մակարդակ**

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20
1	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
2	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
3	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
4	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>

	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36	37	38	39	40
1	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
2	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
3	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
4	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>

Կարճ պատասխանով առաջադրանքներ

41	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
42	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
43	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
44	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>

Պնդումների փունջ

**45**

Տիշտ է

Միսալ է

Չգիտեմ

1	2	3	4	5	6
<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>

Ամբողջ ձևաթղթում սխալ նշված պատասխանները փոխելու տեղը

Ընտրովի

<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>

**Բ մակարդակ**

Կարճ պատասխանով առաջադրանքներ

	47			52			57
ա	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
բ	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
գ	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
դ	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
46	49			54			59
	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
	50			55			60
	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
	51			56			61
	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>

Կարճ

<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>

Կարճ պատասխանով առաջադրանքներ

62	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	66	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
63	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	67	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
64	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	68	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
65	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	69	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>

Պնդումների փունջ

**70**

Տիշտ է

Միսալ է

Չգիտեմ

1	2	3	4	5	6
<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>

Պնդումների փունջ

Տիշտ է

Միսալ է

Չգիտեմ

Արտադրե՛ք այս նախադասությունը

Շնորհիվ եմ քննադիման կարգին: